ISSN 0206—1910

Հեռախոսային հայաստան

4 . 1989

ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՓԱՅԼՈՒՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Մոսկվայում անցկացվեցին համամիութենական մրցումներ, որոնց մասնակցում էին 1975 թվականին և ավելի ուշ ծնված տղաներ և աղջիկներ։

Մրցումներում ելույթ էին ունենում 14 միութենական հանրապետությունների, Մոսկվայի և Լենինգրադի, ինչպես նաև Վիետնամի 112 շախմատիստներ։

Շվեյցարական մրցակարգով կազմակերպվել էր չորս մրցաշար (ըստ տարիքային խմբերի)։ Միաժամանակ, կատարվում էր նաև թիմային հաշվարկ։

1975—76 թթ. ծնված պատանիների մրցաշարում Հայաստանը ներկայացնում էին վարպետության թեկնածու Տ. Նալբանդյանը և առաջին կարգային Մ. Կարապետյանը (Արտաշատ)։ Տարիքային հաջորդ խմբի (1977—78 թթ.) մրցումներում ընդգրկված էին առաջին կարգայիններ Վ. Փիրումյանը, Տ. Պետրոսյանը, Վ. Ալեքսանյանը (վերջին երկուսը՝ հաշվարկից դուրս)։ 1979 թ. և ավելի ուշ ծնված տղաների մրցաշարում հանդես էին գալիս առաջին կարգայիններ Ա. Մատիկոզյանը և Կ. Ասրյանը։

1975—78 թթ. ծնված աղջիկների մրցումներում խաղում էին վարպետության թեկնածու Է. Դանիելյանը և առաջին կարգայիններ Մ. Գրիգորյանն ու Ն. Մովսիսյանը (վերջինս՝ հաշվարկից դուրս)։

Հայաստանի ներկայացուցիչները գերազանց հանդես եկան և նվաճեցին թիմային առաջնությունը։ Մեր մարզիկներից մեկ միավորով ետ մնացին Վրաստանի պատանի շախմատիստները։

Ամենակրտսերների մրցումներում հաղթող դարձավ Անդրանիկ Մատիկոզյանը, որը յոթ հնարավորից վաստակեց 6,5 միավոր։ Ահա թե նա ինչպես անցկացրեց վերջնախաղը հետևյալ պարտիայում։

Ա. ՄԱՏԻԿՈԶՅԱՆ—Ա. ՌԻԶԱԴՈՎ
(Հայաստան) (Մոսկվա)



Խաղատախտակի մոտ են Մ. Միտենիկը (Սոչի) և Կ. Ասրյանը։

Սերյոժա Մովսիսյանը ավարտված խաղը վերլուծում է մոսկվացի մրցավար Գ. Գասպարյանցի հետ:

39. d4!

Ոչ միայն 39....ed 40. Զ:d4 և 41. Զe6+ մտահղացմամբ, այլ առաջին հերթին d3 դաշտն ազատելով ձիու համար՝ b2-ի վտանգավոր զինվորը վերացնելու նպատակով:

39....Փf6 40. Զe1 ed 41. Զd3 g5 42. Ն:b2 Ն:b2 43. Զ:b2

Նավակները փոխանակվեցին, բայց ձիու գերազանցությունը փղի նկատմամբ այնքան ցայտուն է, որ պարտիան շարունակվեց ևս ընդամենը հինգ քայլ:

43....Ա:b6 44. Զc4+ Ա:c5 45. Ա:d3 h5 46. Զa5! Ա:b4 47. Զb7 Փe7 48. e5!, *սևերը հանձնվեցին:*

Նույն խմբում մեր երկրորդ մասնակիցը՝ Կ. Ասրյանը, վաստակելով 5 միավոր, գրավեց երկրորդ տեղը:

Նույնքան հաջող հանդես եկան աղջիկները, հատկապես է. Դանիելյանը և Մ. Գրիգորյանը, որոնք ինը պարտիաներում վաստակեցին համապատասխանաբար 6 և 5,5 միավոր:

Համեմատաբար անհաջող խաղացին մեր հանրապետության՝ 1977—78 թթ. ծնված պատանիները: Բայց այս մրցաշարում էլ առաջին տեղը գրավեց հայ շախմատիստ՝ Թբիլիսցի Սերյոժա Մովսիսյանը (7 միավոր), որը ցուցադրեց հասուն, հետաքրքիր խաղ:

Առանձնահատուկ հետաքրքրություն առաջացրեց «ամենամեծերի»՝ 1975—76 թթ. ծնված պատանիների, մրցաշարը: Այստեղ վստահորեն խաղաց Տ. Նալբանդյանը, որը 6,5 միավորով գրավեց երկրորդ տեղը, հաղթողից ետ մնալով կես միավորով:

Տիգրանը կրեց ընդամենը մեկ պարտություն՝ Վիետնամի ներկայացուցչից: Փոխարենը, վերջին երկու տուրերում նա հաղթեց մրցարշավի առաջատարներին՝ Ա. Զվյագինցևին և Ա. Գելմանին:

Տ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ—Ա. ԳԵԼՄԱՆ
(Հայաստան) (Մոսկվա)
Թագուհու զինվորների սկզբնախաղ

1. d4 Զf6 2. Զf3 e6 3. Փg5 c5 4. Զbd2 Փe7 5. e3 b6 6. Փd3 Փb7 7. 0—0 0—0 8. c3 h6 9. Փh4 Զc6 10. Թe2 Նc8 11. h3 d6 12. Նad1 Թc7 13. Փg3 Նfd8 14. Նfe1 Թb8 15. Փb1 Թa8 16. Թd3 a5 17. Զe4 g6 18. Զ:f6+ Փ:f6 19. Զh2 Փg7 20. Փh4 Նd7 21. Զg4 Զe7 22. e4 g5 23. Փg3 cd 24. cd Զg6 25. Թf3 Ա:h8 26. Զf6 Նdd8 27. Զh5 f5 28. Թb3 f4 29. Փh2 Զf8 30. h4 Նe8 31. hg hg 32. Թh3 Ա:g8 33. Զ:g7 Ա:g7 34. Թh5 e5 35. de Ն:e5 36. Ն:d6 Փ:e4 37. Փ:f4 Նf5 38. Փ:e4 Նe8 39. Փ:a8 Ն:e1+ 40. Ա:h2, սևերը հանձնվեցին:

Ուզբեկստանը ներկայացնող հայ պատանու հետ խաղացած պարտիայում հետաքրքիր կոմբինացիա իրականացրեց Մ. Կարապետյանը: